ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

« 15 » 10 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000689

Ձեռնարկողը՝ ***«ՎԷՀ Քոնսթրաքշն» ՍՊԸ***
ք. Երևան, Անտառային փ., 164/5

Գործունեությունը՝ ***Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական փողոց թիվ 12/2 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Երևան քաղաք

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000489

<< 15 >> 10 2020թ.

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական փողոց թիվ 12/2 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝ «ՎԷՀ Քոնսթրաքշն» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝ Նախնական գնահատման հայտ
«Գ» կատեգորիա

Տեղադրման վայրը՝ Երևան համայնք,
Նոր Նորք վարչական շրջան

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական փողոց թիվ 12/2 հասցեում նախատեսվում է կառուցել բազմաբնակարան բնակելի համալիր:

Նախատեսվող գործունեությունը՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասի «ա» ենթակետի, հանդիսանում է «Գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Համաձայն նախնական գնահատման հայտի, նախատեսվող բազմաբնակարան բնակելի համալիրը կառուցվելու է անշարժ գույքի սեփականության իրավունք ունեցող 3600մ^2 ընդհանուր մակերեսով հողամասի վրա՝ Երևանի քաղաքապետարանի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Հողամասի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնականը՝ բնակելի կառուցապատման:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչընդոտ շրջակա բնակչության համար:

Նկարագրական մաս.

Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Ռելիեֆի բացարձակ նիշերը տեղամասում տատանվում են 1314-1324մ սահմաններում:

Գործունեության ենթակա տեղամասում գրունտային ջրերը տեղակայված են 70մ ավել խորություններում:

Համաձայն նախնական գնահատման հայտի կառուցապատման մակերեսը 1806մ² է: Նախատեսված հողամասի վրա կառուցվելու է 16.4x106.4մ առանցքային չափերով բնակելի շենք: Բնակելի շենքը կազմված է լինելու երեք մասից, համապատասխանաբար՝ 7, 9, 11 հարկ բարձրությամբ: Շենքի ընդհանուր մակերեսը կազմելու է 22.407մ², որտեղ հասարակական տարածքները՝ 2.087մ², բնակարանների մակերեսը՝ 12.560մ², միջանցքների, վերելակների և աստիճանավանդակների՝ 2450մ², բնակարանների քանակը՝ 216 հատ:

Նախատեսվում է 5310մ² ընդհանուր մակերեսով երկու կիսանկուղային ավտոկայանատեղի, որտեղ մի հատվածը նախատեսվում է բացօթյա: Ավտոմեքենաների համար նախատեսված կայանատեղի ընդհանուր թիվը կազմելու է 156:

Կառուցվող համալիրի առաջին հարկում նախատեսվում է բարձր, միջանցիկ այգի, որտեղ կղզյակների սկզբունքով նախատեսվում են ապակեպատ առևտրային կրպակներ: Այգու ձևավորման համար ծածկի սալի մեջ նախատեսվում են մետաղական տաշտեր:

Շինարարությունն ենթադրվում է իրականացնել կապալային եղանակով:

Մասնաշենքերի միացումը արտաքին ինժեներական ցանցերին կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Ավտոճանապարհների, հրապարակների և մայթերի կառուցումը ևս կկատարվի մասնագիտացված շինմոնտաժային կազմակերպությունների կողմից:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական կազմակերպություններից:

Բնակելի համալիրի ջրամատակարարումն ու ջրահեռացումը իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Վեոլիա Ջուր» ՓԲԸ ցանցին: Ջրամատակարարումը կիրականացվի Բագրևանդի փողոցով անցնող ջրագծից, կոյուղագիծը՝ Մոլդովական փողոցով անցնող կոյուղագծից, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ:

Համալիրի գազամատակարարումն իրականացվելու է համաձայն տեխնիկական պայմանի՝ միանալով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ցանցին, որի համար լիցենզավորված կազմակերպության կողմից կիրականացվի նախագիծ: Շինարարական աշխատանքների ընթացքում էլեկտրամատակարարումը՝ 900կՎտ հզորությամբ և 0.4կՎտ լարմամբ կիրականացվի համաձայն տեխնիկական պայմանի:

Շինարարական աշխատանքների տևողությունը ծրագրվում է 3 տարի: Շինարարությունում աշխատողների ընդհանուր քանակը նախատեսվում է՝ 60 մարդ:

Շինարարության փուլում տեխնիկական ջուրը կբերվի պայմանագրային հիմունքներով ավտոցիստեռներով: Շինարարության փուլում աշխատողների կոմունալ-կենցաղային պայմանները կապահովեն՝ տեղադրելով բիոզուգարաններ, իսկ խմելու ջուրը կմատակարարվի տարաներով:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունը կիրականացվի ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում՝ վարձակալել դրանք այլ կազմակերպություններից:

Շինարարական նյութերից օգտագործվելու է ցեմենտ, մետաղական ամրաններ և այլ կոնստրուկցիաներ, ապակի, փայտ, սրբատաշ և կոպտատաշ քարե շար, երեսպատման նյութեր և այլն:

Շինարարության նյութատեխնիկական մատակարարումը նախատեսվում է շինարարական կազմակերպություններից: Շաղախը և բետոնը կառաքվեն Երևան քաղաքի

մոտակա բետոնաշաղախային հանգույցներից՝ մասնագիտացված տրանսպորտային միջոցներով:

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա շինարարական աշխատանքերի ընթացքում կենցաղային աղբն է՝ 20000կգ և շինարարական աղբը՝ 27տ ծավալով: Շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը՝ մոտակա աղբավայր, Երևան քաղաքը սպասարկող օպերատորի կողմից:

Բնառեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր՝ աշխատանքային հարթակի ջրցանի, հանված գրունտի եւ ստացվող ավազի ու խճի խոնավացման, ինչպես նաեւ շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային նպատակների համար:

Շինարարության փուլում ընդհանուր ջրօգտագործումը կազմելու է 1855մ^3:

Ջրցանի ծավալները հաշվարկված է այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար: Անձրևների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղղորդվեն պարզարան: Անձրևաջրերի նստեցման պարզարանը գտնվում է յուրաքանչյուր շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25մ^3 ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500մ^2 մակերեսով տարածքի վրա: Պարզարանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը՝ կհեռացվի որպես շինաղբ:

Բազմաբնակարան բնակելի շենքի նախագիծը ենթադրում է նաև հողային աշխատանքների իրականացում: Երկաթբետոնյա հիմքերի տեղադրման համար կատարվելու է մոտ 36.300մ^3 ընդհանուր ծավալով հողային զանգվածի հանույթ: Հանվող 27.300մ^3 ծավալով հողային զանգվածը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի կողմից օրենքով սահմանված կարգով հատկացված վայր, մնացած մասը՝ 9000մ^3 կարճաժամկետ կպահվի շինարարական հրապարակում և կօգտագործվի որպես հետլիցք:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել՝ կառուցելով մանկական խաղահրապարակներ:

Կանաչապատման աշխատանքներն կիրականացվեն Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված՝ կանաչապատման և բարեկարգման նախագծին համապատասխան:

Զրոյական նիշում կանաչապատ մակերեսը կկազմի 575մ^2:

Կանաչապատման համար օգտագործվելու է մշտադալար թփուտներ, թույա, գնդաձև ակացիա և այլ ծառատեսակներ, ինչպես նաև, բազմամյա և միամյա ծաղկասածիլներ և խոտի սերմ: Ծառերի կպչողականությունն ապահովվելու է պարտադիր ոռոգման և խնամքի պայմաններում, որը իրականացնելու է կառուցապատողը: Ոռոգումն ամբողջությամբ կազմակերպելու համար նախատեսվում է կազմակերպված ոռոգման ցանց՝ կաթիլային ոռոգման հանգույցներ, ռետինե խողովակներով: Ոռոգման նպատակով ջրամատակարարումը կիրականացվի տարածքով անցնող մոտակա ոռոգման ջրատարից՝ պայմանագրային հիմունքներով:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Նոր Նորք վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների և պահպանության ենթակա տարածքների հետ:

Նախատեսվող գործունեության կատարման ժամանակ լինելու են շրջակա միջավայրի վրա ժամանակավոր ազդեցություններ, որոնք հիմնականում կապված են լինելու շինաշխատանքների հետ:

Համաձայն նախնական գնահատման հայտի նախատեսվում են մթնոլորտային օդի, հողի և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկերի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում.

- շինարարության ընթացքում օդային ավազան փոշու արտանետումների քանակը նվազեցնելու նպատակով՝ ջրցանի կատարում,
- սորուն նյութերի պահեստների ծածկում համապատասխան բարձրության թաղանթով,
- սորուն շինարարական նյութերի և հողային զանգվածի տեղափոխում՝ փակ ծածկով մեքենաներով,
- շինարարական նյութերի տեղադրում՝ բետոնապատ մակերեսի վրա,
- աղմուկի մակարդակը նվազեցնելու նպատակով շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերի ծածկում,
- շինհրապարակում թափոնների տարանջատում, աղբամանների տեղադրում,
- շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում շինարարական տեխնիկայի լիցքավորում և յուղում,
- հնարավոր արտահոսքերը կանխելու նպատակով՝ հեղուկ նյութերի պահում հատուկ տակդիրների վրա,
- մթնոլորտային օդի արտանետումների որակական և քանակական ցուցանիշների պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ անգամ,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից պահպանելու նպատակով հողերի մշտադիտարկում՝ երեք ամիսը մեկ անգամ,
- շինարարության ընթացքում աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների կանոնների պահպանում և այլն:

Ամբողջ շինարարության ընթացքում բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է մինչև հինգ մլն ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս.

Համաձայն նախնական հայտի բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրը կառուցվելու և շահագործվելու է ՀՀ-ում գործող օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան: Այն ներդաշնակ է լինելու շրջակա կառույցներին և չի խոչընդոտելու շրջակա բնակչության վիզուալ տեսադաշտը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները կրելու են ժամանակավոր բնույթ՝ պայմանավորված շինարարության փուլով:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, Նոր Նորք վարչական շրջանի թաղապետարանը, ինչպես նաև այլ գերատեսչություններ: Դիտողությունների և առաջարկությունների հիման վրա հայտը լրամշակվել է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Երևան քաղաքի Նոր-Նորք վարչական շրջանի Գայի պողոտա h.19 հասցեում իրականացվել է հանրային քննարկում, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել նախատեսվող գործունեության վերաբերյալ:

Փորձաքննական պահանջներ

1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
3. Կանաչապատման աշխատանքներն իրականացնել համաձայն Երևանի քաղաքապետարանի կողմից հաստատված կանաչապատման նախագծի:
4. Բետոնի տեղափոխումն իրականացնել հայտում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
5. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
6. Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրհեռացման համակարգին:
7. Կառուցապատման աշխատանքների ժամանակ՝ ՀՀ Օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
8. Նախատեսվող շինարարական աշխատանքներն անհրաժեշտ է իրականացնել Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված ժամանակացույցով՝ ըստ աշխատանքային օրերի և ժամերի:
9. Պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ներքուստ և արտաքուստ վերանորոգվող շենքերն ու շինությունները՝ ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՎԷՀ Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Մոլդովական փողոց թիվ 12/2 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Մասնագետ՝ Մ. Ավետիսյան